

ՍԱՀԴՈՆԱ

ԱՍՏՕՈՅ ԵՒ ՈՒՐԻՇՆԵՐԻ ՀԱՆԴԵՊ
ԿԱՏԱՐԵԱԼ ՍԻՐՈՅ ՄԱՍԻՆ



Թարգմանեց՝

ՄԱՇՏՈՅ ՎԱՀԷ ՂԱԶԱՐԵԱՆ

ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՈՂՄԻՑ

Սիրելի Ընթերցող,

*օգտագործելով հաղորդակցութեան ներկայ միջոցները, անձնական նախա-
ձեռնութեամբ՝ փորձում եմ իմ համեստ նպաստս բերել մեր ազգային հոգեւոր
կեանքին, նաեւ համացանցի միջոցով տարածելով քրիստոնէական փոքրիկ գրու-
թիւններ, այսպիսով յաղթահարելով աշխարհագրական սահմանափակումներն ու
առաքումի ժամանակները: Փափաքս է հաղորդել քեզ այն՝ ինչ ինձ հաղորդուեց
Նախախնամութեան գծած զանազան ճանապարհներով:*

*Կարող ես քո մասնակցութիւնը բերել Աստուծոյ Խօսքին մատուցուած այս
ծառայութեանը, հաղորդելով քո մերձաւոր ու հեռաւոր ծանօթներին ահա այս
համացանցային հասցէն.*

gradaran@mashtoz.org

*Այս հասցէին գրելով, նրանց հասցէները նոյնպէս կ'անցնեն իմ անուանա-
ցանկի մէջ եւ յաջորդաբար նրանք նոյնպէս կը ստանան հոգեւոր նոր գրութիւն-
ների հրատարակումը տեղեկացնող նամակները: Այս ծառայութիւնն անվճար է:*

*Այս գործին որեւէ առաջարկ կամ օգնութիւն հասցնելու, որեւէ տեղեկութիւն
խնդրելու կամ հարցումներ ներկայացնելու համար կարող ես գործածել համացան-
ցային վերոնշեալ հասցէն:*

*Կանխայայտ շնորհակալութեամբ եւ լաւագոյն մաղթանքներով,
եղբայրդ ի Քրիստոս Յիսուս՝*

Մաշտոց Վահէ Ղազարեան

Մեր անութիւն

Սահղոնան (յուն. **Μακκαβ. Β'**) ծնունել է Պարսկաստանի Նինուէից դէպի Հարաւ գտնուող Բէիթ Նուհադը նահանգում, եօթներորդ դարի սկզբին: Այն ժամանակուայ Պարսկաստանի մեծ դպրոցում (որն այժմ գտնուում է Նիզիբում) կրթութիւնը վերջացնելուց յետոյ ընդունում է վանական զգեստը, շուրջ 615-620 թուականներին, Բէիթ Աբէում, Յակոբ անունով ճգնաւորի ձեռքից, որը հռչակաւոր էր իր հեղութեամբ եւ որի հաւատարիմ աշակերտն էր Սահղոնան: 635-640 թուականներին ընտրուում է Մահոզ Արեւանի եպիսկոպոս, Բէիթ Գաղմա նահանգում:

Քրիստոսաբանական վէճերը, որոնցով նշանաւոր է հինգերորդ դարը, թւում էր՝ թէ հասել էին հաշտութեան հաստատմանը Եփեսոսի (431թ.) եւ Քաղկեդոնի (451թ.) եկեղեցական ժողովների միջոցով, թէեւ Եկեղեցիների միջեւ բաժանումներն ու հակառակութիւնները բաւական սաստկութեամբ շարունակուում էին ամբողջ վեցերորդ եւ եօթներորդ դարերի ընթացքում: Այս նոր եւ միաժամանակ հին վիճաբանութիւնները տեղի են ունենում Սահղոնայի կեանքի վերջին տարիներին: Նիզիբի դպրոցի առաջնորդ Հենանա Աղիաբէնացու համոզումները արթնացնում են իրական բողոքներ, յատկապէս Իզլա լեռան լանջին գտնուող Մեծ Վանքի վանական Բաբայ Մեծի կողմից, որն աչքի էր ընկնում իր կատարած թարգմանութիւններով: Երբ Սահղոնան աւարտեց **Ապարելու-Թեան** մասին իր աշխատութիւնը, կամ աւելի ճիշտը՝ այդ աշխատութեան խմբագրումը, սոյն գրքի մասին տեղեկանում է Իշոյահբ Երրորդը, որը միեւնոյն Բէիթ Աբէից էր, նախ Աւագ Եպիսկոպոսն էր, որ յետոյ դարձաւ Կաթողիկոս: Սահղոնայի գաղափարներից ոմանք, որոնք վերաբերում էին բնութիւն-իպոստասիզ-անձ յարաբերութեանը, յատկապէս՝ թէ ինչպէս են երկու բնութիւնները միանում մէկ միակ անձի մէջ, դատապարտուում են որպէս հերետիկոսական: Սահղոնան հարկադրուում է լքելու իր եպիսկոպոսական աթոռը եւ ապաստանել արեւմտեան նահանգներում, հաւանաբար՝ Եդեսիայի մօտակայքում: Կարճ ժամանակով կրկին կանչուում է հայրենիք, քանի որ իր կողմնակիցները վայրկենական յաջողութիւններ էին ունեցել, սակայն իսկոյն նորից աքսորուում է միեւնոյն Իշոյահբ Երրորդի կողմից: Վերադառնում է Եդեսիա, ուր եւ անցկացնում է իր կեանքի մնացած օրերը:

Իր գլխաւոր աշխատութիւնը – **Գիբթ Ապարելու-Թեան** – որից այստեղ ներկայացնում ենք մի քանի հատուածներ, քաղուած՝ սիրոյ մասին գլխից, կամենում է լինել հոգեւոր կեանքի ընկեր: Սահղոնան, խորապէս ճանաչելով մարդկային սրտի ծալքերը, պարզ մտածումների միջոցով, առանց գրական յաւանութիւնների (աշխատութիւնը հասցէագրուած է ո՛չ թէ աստուածաբաններին ու գրականագէտներին, այլ վանականներին ու պարզ հաւատացեալներին), բացատրում է այն՝ ինչը որ ինքն անձամբ նկատում է որպէս հիմնական սկզբունքները մարդկային եւ հոգեւոր կեանքի: Աշխատութիւնը բաժանուում է երկու մասի: Առաջինը բաղկացած է չորս պատմութիւններից, որոնցից երկուսը գրեթէ ամբողջովին չեն պահպանուել. միւս երկուսը խօսում են միանձնական եւ անապատական վանական կեանքի մասին: Երկրորդ մասը բաղկացած է տասնչորս գլուխներից, որոնց կազմութիւնը հետեւեալն է. նախաբան, հոգեւոր կեանքի մասին տասներկու պատմուածք, վերջաբան:

Բացի **Գիբթ Ապարելու-Թեան** աշխատութիւնից, մեզ են հասել նաեւ հինգ նամակներ, ուղղուած՝ իր կողմնակիցներին եւ մի քանի բարձրաստիճան անձանց:

Պարզ, բայց վայելուչ, գրեթէ բանաստեղծական ոճով, Սահղոնան չի ներկայացնում ուրիշ ոչինչ եթէ ոչ միայն Աստուածաշնչի **Խօսքը**: **Խորհրդածուած**, **Իւրացուած**, **Սուրբ Հոգու առաջնորդութեամբ կատարուած ընթերցանութեան միջոցով արգասաւորուած մի Խօսք**: Բացայայտ մէջբերումներից բացի, բազմաթիւ են նաեւ սուրբգրային արձագանքները, որ նշմարուում են գրութեան իւրաքանչիւր մասում: Աստուածաշնչեան

Հատուածները կցորդումը մէկ անգամ եւս փաստում է Համոզումը՝ որ Աստուածաշունչն ինքն է իր լաւագոյն մեկնութիւնը: Աստուածաշունչը մնում է հեղինակի ներշնչման գերագոյն աղբիւրը: Աստուածաշունչ, սակայն, որում տառն ու հոգին միմեանց հակառակ չեն, այլ կարծես թէ միմեանց մէջ ներթափանցած, փոխադարձաբար լուսաւորուած ու կենսագործուած:

Սահգոնայի հոգեւոր եւ մշակութային պաշարի էական տարրը Եկեղեցու Սուրբ Հայրերն են: Օգտուում է Եփրեմ Ասորուց, Յովհան Ոսկեբերանից, Գրիգոր Նազիանզացուց, բայց բոլորից աւելի նախընտրում է Բարսեղ Կեսարացուն: Մինչդեռ չի թուում շատ օգտուած լինի Եւագր Պոնտացուց:

Սահգոնայի աշխատանքը որոշ կէտերում կարող է թուալ հասարակ եւ ձանձրոյթ պատճառելու չափ երկար. որոշ գաղափարներ կրկնում են բազմաթիւ պատկերներով: Հեղինակը, գիտակից սրան, մէկից աւելի անգամներ կրկնում է.

*Ես չեմ կարող նկարագրել
Սիրոյ խորհուրդները:*

Սահգոնան փորձում է ասել անասելին, պատմել այն ամէնը՝ ինչը որ պատմելու կարողութիւնը չունեն խօսքերը, նկարագրել այն՝ ինչը անձառելի է: Այո, յօդուածների բաժանուած եւ կուռ ոճով շարադրուած գրութիւնը կարող էր նսեմացնել այսօրինակ նիւթը:

Սահգոնան կշռադատում եւ զանազանում է «գիտութիւն»ը «ճանաչողութիւն»ից, «իմանալ»ը «փորձառութիւն»ից: Իսկ Սէրը այն «ճանաչողութիւններից» մէկն է՝ որ ձեռք է բերում միմիայն «փորձառութեամբ»: Չափազանց խոր փորձառութիւն է, որի խորքերը անհասանելի ու աննկարագրելի են պարզ իմացական գիտութեան համար: Պէտք է մարմին ան մարմին հանդիպել սիրոյ հետ, մենամարտի բռնուել նրա հետ եւ ... ենթարկուել:

*Ով, իրօք, ծառայում է նրան
Եւ ենթարկւում է նրա զօրութեանը,
Նաեւ առանց որեւէ ուսուցման,
Ինքնուրոյն կերպով, երբ փափաքում է,
Վերարթնացնում է իրենում թաքնուած սիրոյ համը:
Եւ այն ամէնով, որ հայթայթում է այնտեղ, կրթում է իր շուրթերը:*

Միմիայն այսպիսի ճանաչողութեան խորութիւններից կարող է շուրթերին հասնել սիրոյ գիտութիւնը:

Ոչ միայն նրան՝ ով նկարագրում է սէրը, անհրաժեշտ է այս խոր փորձառութիւնը, այլ նաեւ նրան՝ ով ունկնդրում է:

*Ո՞վ, իրօք, կարող է տեսնել Աստծուն եւ մնալ անտարբեր:
Եթէ մեր դէմքը թրջուած է նրա փառահեղ լոյսով,
Ոչինչ չենք տեսնի, նրանից բացի:*

Այս ուժը, սակայն, գալիս է միմիայն Աստծուց: Մարդն ինքն իր մէջ չի ստեղծում սէրը, այլ ստանում է Աստծուց, որն ինքնին Սէրն է, եւ պէտք է կրկին վերադարձնի նրան:

Այս գրութիւնը խորհրդածութիւն չէ, այլ մի հեղում: Սրտի հեղումը, որ իրենում փորձած լինելով սէրը, կարողանում է կրթել իր շրթունքները, այնպէս՝ որ կարողանան խօսել սիրոյ մասին:

Սէրը միշտ նկատուած է որպէս որեւէ առաքինութեան եւ արդարութեան գազաթնակէտը: Որեւէ դիմում արդարութեանը, նաեւ Օրէնքը, սիրոյ մէջ կարծես քարանում է: Եւ սրա պատճառը միայն մէկն է. սէրը Աստուած ինքն է:

Մարդը պէտք է ընթանայ դէպի արդարութիւնը, բայց այս ընթացքը միշտ վերջանում է սիրոյ մէջ: Մարդը պէտք է ունենայ մաքուր սիրտ, բայց սիրտը մաքուր է՝ միմիայն եթէ իրենում ունի սէրը: Արտաքին ամէն իրականութիւն պէտք է ծառայի ներքին իրականութիւններին, այսպէս՝ կը դառնայ մի խոչընդոտ: Սահգոնան յստակօրէն զանազանում է այս երկու մարզերը – արտաքինը եւ ներքինը, հոգին եւ մարմինը – բայց չի բաժանում միմեանցից: Նրանք կռուի մէջ չեն եւ փոխադարձաբար չեն մերժում միմեանց, այլ՝ մէկի հայեացքը ուղղուած է դէպի միւսը:

*Սիրոյ կրակը գրաւում է ամբողջ մարմինը ...
Եւ պարզեւում է նրան մի փայլուն հոգեւոր գոյն:*

Մարմինը, որ բռնկուած է սիրոյ կրակով, նրանից մաշուում եւ մաքրագործւում է: Սիրոյ հուրը նրան շնորհում է մի փայլուն հոգեւոր գոյն, որպէսզի հիմա արդէն ձեռքբերի կայունութիւնն ու անապականութիւնը, որոնք իր համար վերապահուած են յարութիւնից յետոյ եկող կեանքի համար: Մարմինը պէտք է հալուի սիրոյ մէջ, որպէսզի չհալուի ջրի մէջ, այսինքն այն մահուան մէջ՝ որ մեղքն է: Մարմինը նախասահմանուած չէ կործանման, այլ՝ կանչուած է գեղեցկութեան: Գեղեցկութիւնը, որ հայելին է սրտի բարութեան: Ահա թէ ինչպէս են ներքինն ու արտաքինը խորապէս միացած իրար, մէկը բացայայտում է միւսին:

*Փնտռենք բոլորի հանդէպ ճշմարիտ սէրը,
Մի սիրտ բարի ու գեղեցիկ,
Որպէսզի մեր մարմինը
Դառնայ գեղեցիկ ու ժպտուն,
Իսկ մեր հոգին՝
Զուարթ ու լուսաւոր:*

Երկրորդ մասն ընծայուած է ուրիշի հանդէպ սիրոյն: «Ուրիշ»ը մի անորոշ եզր է, որը Սահգոնան գործածում է՝ ի նկատի ունենալով մարդուն: Եւ այս «ուրիշ»ը կարող է ներկայանալ որպէս բարեկամ կամ չարակամ: Բայց լինի բարեկամ թէ չարակամ, Քրիստոսին նմանուել կամեցողի համար միակ հնարաւոր կեցուածքը սէրն է:

Մարդկանցից ոչ մէկն արժանի չէ ատելութեան, եւ ոչ իսկ Քրիստոսի թշնամիները: Կարող ենք նաեւ աւելացնել. ո՛չ էլ հերետիկոսներն ու հալածողները: Միմիայն սատանան, այսինքն՝ չարը, արժանի է ատելութեան:

*Ատիր մեղաւորի գործերը,
Բայց ո՛չ իրեն:*

Ուրիշի հանդէպ սէրը ունի նաեւ մէկ միակ արդարացում. իւրաքանչիւր մարդու ներաշխարհում դրոշմուած է Աստծոյ պատկերը: Մէկ միակ է նաեւ սիրելու կերպը. լինելով ըստ Քրիստոսի պատկերի եւ նմանութեան:

Սիրելը եւ սիրուելը արդարանում են այնքանով՝ որքանով որ Աստծոյ մէջ են գտնում իրենց ճշմարտութիւնը: Այսպէս, ուսմունքային գետնի վրայ, Սահգոնան իր աշխատութեանը տալիս է միութիւն Սէր–Աստծոյ մէջ, որից է բխում եւ դէպի որն է ուղղուած իւրաքանչիւր սէր, որովհետեւ Նրանից է գալիս եւ դէպի Նա է վերադառնում ամէն մարդ եւ առհասարակ ամէն ինչ:

Քրիստոսի հետեւորդութեան–նմանողութեան ընթացքի վրայ շեշտումը կրկնում է մարդկային վարմունքի եւ գործունէութեան միասնականութեան պահանջը: Մարդն աճում եւ հասունանում է այնքան՝ որքան փափաքում է նմանուել Աստծուն, հետեւաբար՝ որքան սիրում է Աստծուն, որովհետեւ Աստուած սէր է, եւ եղբայրներին, որովհետեւ ներկայացնում է յայտնում են Աստծուն:

ԱՍՏՕՅ ԵՒ ՌԻՒՇՆԵՐԻ ՀԱՆԴԵՊ ԿԱՏԱՐԵԼ ԽԻՈՅ ՄԱՍԻՆ

2. Ճշմարիտ հաւատացեալներին, որոնք հաստատուն մնացին Աստուծոյ յոյսի մէջ եւ սրտանց ուրախանում են, սպասելով Նրա բարիքներին, եւ լի են Սուրբ Հոգու ուրախութեամբ.

Անհրաժեշտ է՝ որ նախեւառաջ գօտեպնդուեն Աստուծոյ սիրոյ մէջ¹:

Նրանում է մեծանում եւ ընդարձակում

Իրենց արդարութեան փառաւոր կերտուածքը:

Ինչպէս հազարաւոր գեղեցկութիւնների տէր եւ տեսքով լուսաւոր գոհարը՝

Սիրոյ միջոցով փայլում եւ շողշողում է

Նրանց հաւատքի նուրբ ոսկուց շինուած թաղը:

Մէրն է Աստուծոյ երկիւղի փառաւոր վախճանը

Եւ կատարելութեան ամբողջ լիութիւնը:

Սա՛ է արդարութեան լաւագոյն ճանապարհը²:

Սիրոյ մէջ ամբողջ Օրէնքը գործադրւում եւ կատարելագործւում է³,

Իսկ արդարութեան ընթացքը

Նրանում հասնում է իր լրմանը եւ կանգ է առնում⁴:

Հաւատքը եւ յոյսը, սիրոյ միջոցով,

Կարող են հաստատուն եւ պաշտպանուած մնալ.

Եւ նա մեծ է եւ գերազանցում է նրանց:

3. Իրօք գովաբանուած է սէրը

Աստուծուց եկող մեծամեծ պարգեւների մէջ.

Ընտրեալն է նրանց մէջ

Եւ նրան են ձգտում եւ նրան են յարմարւում բոլոր պարգեւները:

Մարդը, սիրոյ միջոցով, դառնում է Երրորդութեան օթեւանը.

Սէրը նրան խառնում եւ միացնում է Աստուածութեանը,

Այնպէս՝ որ ըստ կամքի դառնում են մէկ իրականութիւն:

Մէրն, յիրաւի, մեծութեամբ գերազանցում է բոլոր բարի գործերին

Եւ Աստուծուց եկող բոլոր պարգեւներին,

Եւ առանց նրա՝ բոլոր պարգեւներն անպտուղ են

Եւ ամէն արդարութիւն՝ մի ոչնչութիւն:

Սրա վկան է Պօղոս Առաքեալը. «Եթէ նախանձախնդիր էք լաւագոյն շնորհներին,

Ձեզ ցոյց կը տամ լաւագոյն ուղիւն»⁵:

Իսկ ո՞րն է դա:

Կատարեալ եւ գերազանց սէրը:

4. Առանց սիրոյ

Մարդկային եւ հրեշտակային գիտութեան ամբողջ ճարտասանութիւնը

Յիմարութիւն է առանց իմաստութեան:

¹ Հմմտ. Կող 3, 14

² Հմմտ. 1Կր 12, 31

³ Հմմտ. Գաղ 5, 14

⁴ Հմմտ. 2Տմ 4, 7

⁵ 1Կր 12, 31

Մարգարէական կանխագիտութիւնն անգամ ոչինչ է առանց սիրոյ:
Եւ սերտ հաղորդակցութիւնը
Եւ Աստծոյ գաղտնաթաքուն խորհուրդների լիակատար ճանաչումը
Ոչ մի օգուտ չունի,
Ո՛չ էլ մեծ հաւատքը, որ ի զօրու է տեղափոխելու լեռները:
Նաեւ նիւթական ողորմութիւնների առատութիւնը
Եւ աղքատների հանդէպ կարեկցանքը,
Ոչնչի չեն ծառայում:
Բայց ի՞նչ եմ ասում:
Մինչեւ իսկ մարտիրոսների մեծ պատիւն ու փառքը,
Որ իրենց մարմինը տալիս են այրուելու,
Առանց սիրոյ՝ ոչ մի օգուտ չի ունենալու¹:

5. Սէրը համբերող է եւ քաղցրաբարոյ:
Նեղութիւնների մէջ չի տխրում
Եւ չի ապստամբում դժուարութիւնների դիմաց,
այլ քաղցրութեամբ ու համբերութեամբ
Կրում եւ հանդուրժում է ամէն բան:
Չար հոգիով չի նախանձում այլոց բարիքներին,
Չի վրդովւում, երկիւղով բռնուած,
Յանկարծակի հասնող դէպքերի համար:
Ունեցածների համար չի հպարտանում, անմիտների նման,
Ո՛չ էլ պարծենում է, ինչպէս մէկը՝ որ չունի դատողութիւն:
Երբեք չի գործում անվայել գործեր:
Չի փնտռում եւ չի հոգում իր շահերը,
Ինչպէս մէկը՝ որ սիրում է ինքն իրեն:
Չի զայրանում, բարկութեամբ չի գրգռում, երբեք,
Եւ չի խորհում չար իրողութիւններ:
Անիրաւ ամէն ուրախութիւն հեռու է նրանից
Եւ մերժում է մեղքի ամէն գործողութիւն:
Միմիայն ճշմարտութեան մէջ է գտնում իր ուրախութիւնն ու հաճութիւնը,
Արդարութեան ճշմարտութեան մէջ է ցնծում ու խայտում,
Եւ նրա համար ամէն բանի համբերում ու դիմանում է,
Նրան հաւատում է
Եւ յոյսով սպասում է այն ամէնին՝ որ խոստացուած է:
Երբեք չի տատանւում կամ ընկնում այն վայրից, ուր հաստատուած է²:

6. Ահա այն՝ ինչ գործում է Աստծոյ սէրը
Բոլոր նրանց մէջ՝ ովքեր ունեն այն.
Եւ նրանց միջի գեղեցկութիւնները
Այն կատարելագործում է եւ հասցնում լրման,
Առաքեալի խօսքի համաձայն³.
Եւ բոլոր բարիքներով հարստացնում ու ճոխացնում է նրանց,
Որովհետեւ իրեն ամէն բան հնարաւոր է:
Սէրն է, յիշաւի, պատուիրանների գերագոյն կատարելութիւնը,
Եւ ուր գտնում է, բոլոր պատուիրանները նրանում գտնում են իրենց լրումը,
Քանի որ հնարաւոր չէ, որ Աստծուն սիրողը
Ձանց առնի պատուիրաններից որեւէ մէկը, կամ խուսափի նրանցից:

¹ Հմմտ. 1Կր 13, 1-3

² Հմմտ. 1Կր 13, 4-8

³ Հմմտ. Եբր 13, 21

Աստծոյ նկատմամբ սէրը արտայայտուում է պատուիրանների պահպանութեամբ, ինչպէս ինքն է ասում.

«Ով սիրում է ինձ, պահում է իմ պատուիրանները»¹,
Եւ կրկին. «Եթէ ինձ սիրում էք,

Պահեցէք պատուիրաններս»²:

Եւ. «Ով ընդունում է իմ պատուիրանները
Եւ դրանք պահում, նա է՝ որ սիրում է ինձ.

Ով սիրում է ինձ, կը սիրուի իմ Հօրից.

Եւ ես նրան կը սիրեմ եւ ինձ կը յայտնեմ նրան»³,

Եւ. «Նրա մօտ կը գանք եւ նրա մօտ կ'օթեանենք»⁴:

7. Տե՛ս, ուրեմն, թէ ինչպէս է

Պատուիրանների պահպանութիւնից եկող արդարութիւնը
Սիրոյ մէջ կատարելագործում:

Երրորդութեան բնակարանն է նա՝ ով հետեւում է սիրոյն
Եւ ներքուստ հրճուում է աստուածային տեսութեամբ:

Երանելի է նա՝ ով ստացել է սա,

Ով դարձել է սիրոյ բնակութեան վայրը

Եւ ում մէջ քաջալերում է Աստուածութիւնը:

Իսկապէս, հիմա արդէն բնակուում է երկնքի արքայութեան մէջ:

Ի՞նչ է, իրօք, երկնքի արքայութիւնը,

Եթէ ոչ՝ Աստծոյ հետ լինելու ուրախութիւնը:

Եւ ի՞նչ է Աստծոյ հետ լինելու ուրախութիւնը,

Եթէ ոչ՝ Նրա սիրոյ մէջ ընդարձակուելը,

Նրա կարեկցանքի համար ուրախանալը

Եւ Նրա վրայ սեւեռուած հայեացքը

Եւ Նրանում հանգստացած հոգու բերկրանքը:

Իրաւացիօրէն է, ուրեմն, ասում մեր Տէրը.

«Ձեր մէջ է Աստծոյ արքայութիւնը»⁵:

Ով, յիրաւի, իր մէջ ունի Աստծոյ սէրը,

Այսինքն՝ ամբողջ Աստուածութիւնը,

Ինչպէ՞ս չի ունենայ իր մէջ նաեւ արքայութիւնը:

8. Երջանիկ է սիրով լի մարդը,

Որ իր սրտում բնակեցնում է

Այն Աստծուն, որն ինքնին Սէրն է⁶:

Երջանիկ է սիրտը, թէեւ խոնարհ ու անշուք,

Որն իր ներաշխարհում

Որպէս խաղաղ բնակատեղի

Հոգեպէս բնակեցնում է Նրան՝

Ում պարունակել չեն կարող երկինքն ու երկիրը:

Երջանիկ է լուսաւոր աչքը այն սրտի,

Որն իր մաքրութեան մէջ բացայայտ տեսնում է Նրան՝

Ում առջեւ Սերովբէները ծածկում են իրենց դէմքը⁷:

¹ Հմմտ. Յվհ 14, 15.21.23

² Յվհ 14, 15

³ Յվհ 14, 21

⁴ Յվհ 14, 23

⁵ Ղկս 17, 21

⁶ Հմմտ. 1Յվհ 4, 16

⁷ Հմմտ. Ես 6, 2

«Ով իսկապէս սիրում է ինձ, կը սիրուի իմ Հօրից.
 Եւ ես նրան կը սիրեմ եւ ինձ կը յայտնեմ նրան»¹:
 Եւ. «Նրա մօտ կը դանք եւ նրա մօտ կը հաստատենք մեր բնակութիւնը»²:
 Որտե՞ղ, ուրեմն, պիտի սիրուի Աստուած, եթէ ոչ՝ սրտի մէջ:
 Եւ որտե՞ղ պիտի յայտնուի, եթէ ոչ՝ այնտեղ:
 «Երանի՛ սրտով մաքուրներին, որովհետեւ տեսնելու են Աստծուն»³:
 Կրկին հարցնում եմ. որտե՞ղ պիտի բնակուի, եթէ ոչ՝ նրանց մէջ:
 «Իսկապէս բնակուելու եմ նրանց մէջ եւ նրանց մէջ եմ ընթանալու»⁴:
 Տե՛ս, այնքա՛ն մեծ է մաքուր սիրտը,
 Այսինքն՝ սիրով լի,
 Որ մինչեւ իսկ Աստուած կարող է քայլել նրա ներսում⁵:

9. Երանի՛ է քեզ, սիրտ անկեղծ, Աստուածութեան բնակարան:
 Երանի՛ է քեզ, սիրտ մաքուր, որ հայում ես էութիւնը թաքնուած⁶:
 Ո՛վ դու մարմին եւ արիւն, սպառող կրակի բնակարան:
 Ո՛վ դու մարմնեղէն արարած, հողի փոշուց ստեղծուած,
 Օթեւան ես Նրա համար՝ ով սպառում է դարերը:
 Իսկապէս զարմանալի եւ շփոթեցուցիչ է ասելը.
 Նա, որի առջեւ երկինքն անգամ անմաքուր է⁷,
 Նա, որ ապշանքով պատում է իր հրեշտակներին⁸,
 Փափաքում է բնակուել սիրով լի մարմնեղէն սրտի մէջ
 Եւ սիրում է այն,
 Եւ այն համարում է այնքան ընդարձակ ու մաքուր,
 Որ դարձնում է իր սուրբ բնակավայրը,
 Ընդունակ՝ ուրախութեամբ ծառայելու եւ մեծարելու⁹
 Իրեն, ում հրեղէն հրեշտակների հազար հազարներն ու բիւր բիւրաւորները⁹
 Երկիւղով են ծառայում ու պատում:

10. Ո՛վ դու սէր, ինչպէ՛ս ես պատում այն սիրտը՝ որ քեզ բնակեցնում է իր մէջ:
 Նրան դասում ես հրեշտակներից վեր:
 Բայց ի՛նչ: Հրեշտակները նրան ենթակայ են,
 Քանի որ ծառայում են Տիրոջը, որ նրանում է:
 Յիրաւի, ուր բնակում է թագաւորը, այնտեղ են հաւաքւում իր ծառաները.
 Եւ եթէ գնում է մի համեստ ու աղքատ տան մէջ բնակուելու,
 Նրան տալիս է մեծ արժանապատուութիւն:
 Ինչպիսի՛ն է լինելու, ուրեմն, այն սրտի արժանապատուութիւնը,
 Որում բնակում է յաւիտենութեան Թագաւորը¹⁰:

¹ Յվհ 14, 21

² Յվհ 14, 23

³ Մտթ 5, 8

⁴ 2Կր 6, 16

⁵ Հմմտ. Ղեւտ 26, 11-12

⁶ Հմմտ. Մտթ 5, 8

⁷ Հմմտ. Յոբ 15, 15

⁸ Հմմտ. Յոբ 4, 18

⁹ Հմմտ. Դան 7, 10

¹⁰ Հմմտ. 1Տմ 1, 17

Եւ քանիցս առատ են լինելու իր հարստութիւններն ու ուրախութիւնը,
Եւ հաստատուն՝ իր ուժը:

11. Օրհնեալ ես դու, Տէր, որ բարձունքներում բնակուելով հանդերձ¹,
Մարդու սիրտը դարձրիր Քո բնակարանը,
Այսպիսով բնակեցնելով նրան Քեզ հետ, բարձունքներում,
Որպէսզի վերեւում եւ ներքեւում
Լինի Քեզ հետ եւ փառաբանի Քեզ,
Եւ Դու կարողանաս բնակուել նրանում, ուրախացնելով նրան եւ զօրացնելով²:
Փա՛ռք Քեզ,
Սրտին պարգեւածներիդ համար,
Որ ձեռքերդ հողից կաղապարեցին նրան,
Որի մէջ բնակեցրիր սէրդ:
Իրօք. «Բոլոր նրանք՝ ովքեր Քո վրայ են դնում իրենց յոյսը,
Ուրախանում են, միշտ փառաւորում են Քեզ,
Եւ Դու բնակում ես նրանց մէջ:
Քեզնով են զօրանում բոլոր նրանք՝ ովքեր սիրում են Անունդ»³:

12. Ի՞նչ ուրախութիւն կարող է հաւասարուել
Աստծոյ մէջ գտնուած ուրախութեանը:
Ձափի ի՞նչ միաւոր կայ նրան համագօր:
Նրա իմացականութիւնը երկինքն է,
Եւ Աստուած եւ իր հրեշտակները բնակում են այնտեղ, փառահեղ.
Եւ ինչպէս երկնքում Աստծոյ գովքը երբեք չի դադարում,
Նմանապէս՝ սիրով լի իմացականութեան մէջ:
«Յաւիտեան, – ասուած է, – գովելու են Քեզ եւ Դու բնակուելու ես նրանց մէջ»⁴:
Անդադար, ուրեմն, փառաւորուած է Նա
Նրանց մէջ՝ ովքեր սիրում են Իրեն
Եւ իր մէջ են գտնում իրենց զօրութիւնը:
Նրանց մէջ, յիրաւի, իւրաքանչիւր Իշխանութիւն, իւրաքանչիւր Պետութիւն
Եւ իւրաքանչիւր Զօրութիւն դադարում է լինելուց⁵.
Եւ Աստծոյ հետ թագաւորում են փառքով,
Որովհետեւ իրենց թշնամիները իրենց ոտքերի տակ են⁶,
Եւ Աստծոյ կամքը նրանց մէջ կատարում է
Ինչպէս երկնքում⁷:
Արդարեւ, բարիքներից ո՞ր մէկը կարող է պակասել այնտեղ՝
Ուր Աստուած, սիրոյ համար, բնակում է:
Նրանից է գալիս որեւէ բարի գործ կատարելու օգնութիւնը.

¹ Հմմտ. Սղմ 113, 5

² Հմմտ. Սղմ 5, 12

³ Սղմ 5, 12

⁴ Սղմ 5, 12

⁵ Նախադասութիւնը մի քիչ խրթին է եւ կարող է ունենալ երկու իմաստ. կա՛մ Իշխանութիւնները, Պետութիւններն ու Զօրութիւնները, այսինքն՝ հրեշտակային դասերը դադարում են այդպիսիք լինելուց, կա՛մ էլ՝ դադարում են ընդհանրապէս գոյութիւն ունենալուց (լինել = գոյութիւն ունենալ): Աւելի հաւանական է առաջին իմաստը:

⁶ Հմմտ. 1Կր 15, 24-25

⁷ Հմմտ. Մտթ 6, 10

«Մենք գիտենք, որ Աստուած օգնում է
Նրանց՝ ովքեր սիրում են Իրեն,
Բոլոր գործերում, բարիքի համար¹:
Յիրաւի, Աստուած Ինքն է՝ որ
Ինչպէս Իր սեփական տաճարում
Գործում է նրանց մէջ եւ հասցնում կատարելութեան
Ամէն բան՝ որ գեղեցիկ է:

13. Մենք նոյնպէս, սիրելիներ, սիրենք Աստծոյ սէրը,
Ամէն բանից վեր սիրենք այս սէրը
Եւ սրարշաւ ընթանանք նրա ետեւից,
Առաքեալի խօսքի համաձայն.

«Սիրոյն հետամուտ եղէք»²:
Այդ սէրն ենք, նախեւառաջ, աճապարում ձեռքբերել,
Այսպէս կը ստանանք օգնութիւն, Նրանից՝ ում սիրում ենք,
Իրականացնելու համար բոլոր բարիքները, որ սիրում է Նա:
Շտապենք սիրել Նրան
Մեր ամբողջ սրտով եւ մեր ամբողջ հոգիով,
Մեր ամբողջ զօրութեամբ եւ մեր ամբողջ մտքով³,
Ինչպէս Ինքն է հրամայում ու պատուիրում.
«Սիրիր քո Տէր Աստծուն
Ամբողջ սրտովդ եւ ամբողջ հոգիովդ,
Ամբողջ զօրութեամբդ եւ ամբողջ մտքովդ.
Սա՛ է առաջին եւ գլխաւոր պատուիրանը»⁴:

14. Թող առատանայ եւ աճի մեզնում Աստծոյ սէրը⁵,
Նրա շնորհիւ՝ վերստին աւիւնով լցուենք,
Անսասան դարձնենք մեզնում Նրա սէրը:
Նրա հանդէպ հաւատարմութեամբ
Եւ Նրա մասին անդադար մտորելով է աճում Նրա հանդէպ սէրը
Եւ զօրանում՝ Նրա հանդէպ տենչը:
Մենք եւ արժարժենք մեզնում Նրա սիրոյ վառ ջերմութիւնը
Նրա հետ խօսակցութեան միջոցով.
Մի բան, որ հնարաւոր է սրտի մաքրութեամբ:
Յիրաւի, սրանից սնուելով է հոգու խորքում ուժգին վառում
Նրա սիրոյ կրակի բոցը.
Նրան հայոյ իմացականութեան սեւեռուն հայեացքով
Եւ հոգու աչքի պարզութեան լուսաւոր փայլով⁶,
Որը, ի վերուստ եկող փառահեղօրէն պայծառ լոյսի զօրութեան ազդեցութեան ներքոյ,
Խառնում է:

15. Ովքեր միմեանց կապուած են բնական կրքով,
Նրանց մէջ սէրը աճում եւ ընդարձակում է,

¹ Հում 8, 28

² 1Կր 14, 1

³ Հմմտ. Մտթ 22, 37-38

⁴ Մտթ 22, 37-38

⁵ Հմմտ. Փլպ 1, 9

⁶ Հմմտ. Մտթ 6, 22

Քանի որ մէկը միւսի կողքին է.
Հայեացքների միութեան մէջ
Արթուն է մնում նրանց կիրքը.
Եւ աճում է ու ամրանում
Սիրոյ կրքոտ խօսքերի փոխանակութեամբ.
Նաեւ յիշողութիւնը մնում է միշտ արթուն
Սիրոյ մեծ ուժի խթանումների ներքոյ:
Այսպէս, Նրա մօտ միշտ բնակուելով
Եւ իմացականութեան պարզ հայեացքով
Եւ Նրան ուղղուած հոգեւոր հայեցողութեամբ
Եւ Նրա յիշատակի հետ անդադար երկխօսութեամբ
Եւ Նրա խօսքերի շուրջ խորհրդածութեամբ
Մարդու ներաշխարհում մեծանում եւ ընդարձակում է Աստուծոյ հանդէպ տենչը:
Սիրտը բոցավառում է
Սուրբ Հոգուց ստացած սիրոյ կրակով:
Հուր, որ տարածում եւ հրդեհում է նրա ոսկորները
Եւ գրաւում է նրա ամբողջ մարմինը¹:

16. Եւ ինչպէս հոգեւոր հնոցում,
Սպառում է նրան իր ջերմութեամբ:
Եւ կաւէ անօթի նման չորացնում է նրան
Մարմնի աշխարհիկ նիւթականութեան խոնավութիւնից:
Եւ պարզեւում է նրան մի փայլուն հոգեւոր գոյն,
Այնպէս՝ որ այլեւս չի մնում մարմնի մեղկ ցեխը,
Որը մեղքի մահուան շնորհիւ սպառում է:
Այլ ինչպէս խորհրդի մէջ,
Արդէն այժմ, որպէս գրաւական ձեռք ես բերում
Հաստատութիւնն ու անապականութիւնը,
Որոնք նրան վերապահուած են
Յարութիւնից այն կողմ եղող կեանքի համար:
Թող լինի ինչպէս կաւը², որը ջրի մէջ չի լուծւում,
Այսինքն՝ հոգեւոր մարմին,
Որը անմահ լինելով այն մահուանը՝
Որ մեղքն է,
Պահպանուած է արդարութեան կեանքի համար: ...

18. Ես ընդունակ չեմ նկարագրելու սիրոյ խորհուրդները,
Տեսանելի պատկերների միջոցով,
Քանի որ կաղապարում են գաղտնի,
Մաքուր եւ Հոգին ցոլացնող սրտում:
Ում ներաշխարհում ձեւաւորում է
Սիրոյ անսահման գեղեցկութեան խորհուրդը,
Նա ճանաչում է նրա զօրութիւնը
Եւ փորձառութեամբ զգում է այն՝ ինչ ասում եմ:
Եւ նախ քան իմ ասելը
Խայտում է սիրոյ մէջ:

¹ Հմմտ. Սղմ 39, 3

² Ի նկատի ունի կրակի մէջ թրծուած կաւը:

Սա է պատուիրում Պօղոս Առաքեալը.
«Ցնծացէք, – ասում է, – ձեր յոյսով.
Սիրեցէք ձեր Տիրոջը,
Հոգեպէս տոչորուելով»¹:

19. Նա, իրօք, ում հոգին բոցավառուած է սիրով,
Ձի կարող մոռանալ իր Տիրոջ յիշատակը
Եւ չի կարող դադարեցնել Նրա հետ խօսակցութիւնը:
Յիրաւի, սիրոյ կրքոտ կրակը,
Որով բոցավառուած է սիրտը,
Նրան հանգիստ չի թողնում,
Ցնցում է նրան անդադար:
Նա, ում ընտրութիւնը յայտնի եղաւ արգանդից
Եւ ում Տէրը սրբագործեց դեռ մօր գրկում²,
Բոցավառ է այս կրակով:
«Ջանացի, – ասում է, – չյիշել Նրան
Եւ այլեւս չխօսել Նրա անունով,
Բայց Նա իմ սրտում է,
Ինչպէս մի կրակ, որ այրում է
Եւ բոցավառում ոսկորներս»³:
Այսպէս է նաեւ մաքուր սիրտը, լի ուրախութեամբ
Եւ Տիրոջ նոր հոգիով, որ ասում է.
«Սիրտս ներսումս այրւում է
Եւ մարմնիս մէջ մի կրակ է բորբոքւում»⁴: ...

24. Ո՞վ կը պարգեւի մեզ ճանաչելու սիրոյ համը,
Որը զգալի է միայն այն հոգիների համար, որոնք ճաշակում են այն,
Որի մասին լսածով միայն ձեւացած ճանաչողութիւնը
Ձի կարող զգացնել նրա զօրութիւնը:
Ով, իրօք, ծառայում է նրան
Եւ ենթարկւում է նրա զօրութեանը,
Նաեւ առանց որեւէ ուսուցման,
Ինքնուրոյն կերպով, երբ փափաքում է,
Վերարթնացնում է իրենում թաքնուած սիրոյ համը:
Եւ այն ամէնով, որ հայթայթում է այնտեղ, յանկարծակի,
Կրթում է իր շուրթերը,
Եւ լիանում է նրա քաղցրութեան ուրախութեամբ:
Բայց ո՞վ մեզ ընդունակ դարձրեց ճանաչելու
Սիրոյ խօսքերի խորհուրդը,
Այն աստիճան, որ նրա մասին խօսել կարողանալուց առաջ
Խայտում ենք նրանում,
Նման այն մատղաշ հորթերին, որոնք բնական սիրոյ ազդեցութեամբ
Վազվզում են իրենց մայրերի ետեւից:
«Ջուրը, – ասում է սիրոյ մի բանաստեղծ, –
Վազում է դէպի ջուրը,
Եւ բոցը խառնւում է բոցին»:

¹ Հմմտ. Հռմ 12, 11-12

² Հմմտ. Եր 1, 5

³ Եր 20, 9

⁴ Սղմ 39, 3

Սիրոյն վերաբերուող խօսքերը
Գրգռում են նրանց՝ ովքեր իրենց սիրում են:
Նա՛ ում ներաշխարհում բնակուում է սէրը,
Ներթափանցում եւ ըմբռնում է նրա խօսքերը.
Եւ խօսելուց առաջ՝ արդէն հասկացել է:
Բայց նա՛ ում ներսում սէր չկայ,
Օտար է մնում նրա խօսքերին: ...

26. Ով սպառուում է Աստծոյ սիրով,
Մեռած է այն ամէն ինչին՝ որ աշխարհինն է:
Եւ ապրում է միմիայն Աստծոյ համար, որին սիրում է¹:
Եւ քանի որ յաղթուել է Աստծոյ սիրուց,
Իր հայեացքը յարատեւ ուղղուած է դէպի Նա,
Եւ այս պատճառով էլ՝ միւս իրողութիւնները չեն կարող

չեղել նրա կենտրոնացած միտքը:

Նոյնիսկ երբ մեծ սաստկութեամբ
Բռնուած է ուրիշ իրողութիւններով,
Ոչ մէկի ազդեցութեամբ չի անդամալուծուում:
Այլ դէպի Աստուած է ուղղում իր սլացքը
Եւ սաւառնում է ամէն ինչից վեր:
Ո՞վ, իրօք, կարող է տեսնել Աստծուն եւ մնալ անտարբեր:
Եթէ մեր դէմքը թրջուած է Նրա փառահեղ լոյսով,
Ոչինչ չենք տեսնի, Նրանից բացի:
Ում իմացականութիւնը բեւեռուած է Աստծոյ մէջ, մի գանձ է,
Եթէ սէրը այն դուրս է հանում ամբողջական:
Ինչպիսի՞ հարստութիւններ կարող են համեմատուել
Եւ ինչպիսի՞ վայելքներ են նմանուում նրան: ...

29. Սիրողը սիրում է Սիրեցեալի կօշիկները.
Ոչ ոք չի խօսում.

Նրա ականջը ուշադիր է Սիրեցեալի ձայնին²:
Նոյնիսկ եթէ ննջում է, շարունակում է տեսնել Նրան,
Իսկ երբ արթնանում է, մտածում է միայն Նրա մասին:
Երբ Նրա կողքին չէ, Նրան զննում է մտքով:
Երբ ծառայում է Նրան, իր դէմքը չի կարմրում.
Սա է, յիրաւի, այն՝ ինչ ասում է Առաքեալը.
«Սէրը չի փրկում»³, այսինքն՝ չի ամաչում:
Եթէ իրօք չի փրկում,
Ուրեմն ուշադրութիւն չի դարձնում
Իր անձի արտաքին կերպարանքին մատուցուած մեծարանքին,
Այն աստիճան, որ չկամենար ծառայել Նրան՝ ում սիրում է:
Անձրեւում է մեր մէջ Աստծոյ սիրոյ կաթիլներից մէկը
Եւ մենք անտարբեր չենք մնում իր խօսքերին:
Եթէ սէրը մեզնում չի սերմանում ի վերուստ,
Ոչնչի չեն ծառայում նրա մասին ասուած մեր խօսքերը:
Բայց եթէ մեզնում այրուում է այն՝ ինչ գալիս է ի վերուստ,
Ուրիշ ոչնչով չի կարող հանգցուել մեզնում: ...

¹ Հմմտ. Հռմ 6, 11

² Հմմտ. Յվհ 1, 27; 3, 29

³ 1Կր 13, 4

37. Ով տեսնում է Աստծուն, իր մէջ նշմարում է Նրա պատկերը:
 Նրա տեսութիւնն, իրօք, սրտից ներս հաստատում է սէրը,
 Իսկ սէրը, հաստատուելով, դրոշմում է Նրա պատկերը
 Այն անձի մէջ, որը կամենում է նմանուել եւ հետեւել
 Նրա բոլոր շարժումներին ու վարուելակերպին,
 Ինչպէս մի մարդ նմանում է նրան՝ ում սիրում է:
 Ով նմանում է Աստծուն, խաղաղութեան մէջ է մարդկանց հետ¹:
 Իր անձի նման սիրում է
 Իր ըստ մարմնի մերձաւորներին:
 Սա է, յիշաւի, երկրորդ պատուիրանը,
 Որ նման է առաջինին.
 «Պիտի սիրես մերձաւորիդ քո անձի պէս»²:
 Աստուած Իր հանդէպ սէրը կապեց ուրիշների հանդէպ սիրոյն
 Եւ նրա կողքին դասեց:
 Մեծ հոգատարութեամբ պէտք է այն փնտռենք,
 Եթէ իսկապէս սիրում ենք Աստծուն
 Եւ կամենում ենք նմանուել Նրան, որպէս իրական սիրահարներ:
 Հարկաւոր է, հետեւաբար, որ սիրենք մէկս միւսին
 Ինչպէս սիրում ենք մեր սեփական անձը:
 Աւելին. իրականում պէտք է սիրենք մեզնից աւելի,
 Ինչպէս նաեւ Ինքը վարուեց մեր նկատմամբ,
 Զոհելով մեր համար Իր կեանքը³:

38. Այսպէս Նրան նմանուեցին Առաքեալները:
 Մեր փրկութեան համար նուիրեցին իրենց կեանքը⁴:
 Բայց ի՞նչ եմ ասում. «Իրենց կեանքը»:
 Նրանցից մէկը,
 Ուրիշների հանդէպ տաճած սիրոյ գերառատութիւնից,
 Պատրաստ էր մինչեւ իսկ ինքը Քրիստոսից բաժանուելու,
 Միայն թէ նրանք մերձենային:
 «Պատրաստ եմ ես ինքս նզովուել,
 Բաժանուել Քրիստոսից,
 Իմ եղբայրների, ըստ մարմնի ազգակիցներիս,
 Այսինքն՝ Իսրայէլի որդիների համար»⁵:

39. Ո՛վ անչափելի սէր:
 Նա, ում ո՛չ բարձրութիւնը, ո՛չ խորութիւնը,
 Ո՛չ էլ երկու արարածները կարողացան բաժանել
 Քրիստոսի սիրուց⁶,
 Այժմ, Քրիստոսի Խաչի թշնամիների⁷
 Եւ իր հաւածիչների ու իր ընկերների համար
 Տրամադիր է բաժանուելու Նրանից,

¹ Հմմտ. Հռմ 12, 18

² Մտթ 22, 39

³ Հմմտ. Եփս 5, 2

⁴ Հմմտ. 1Թղ 2, 8

⁵ Հռմ 9, 3-4

⁶ Հմմտ. Հռմ 8, 39

⁷ Հմմտ. Փլպ 3, 18

Եթէ այդպիսով հնարաւոր կը լինէր
Մօտեցնել թշնամիներին Քրիստոսին:
Մինչ մենք դժուարանում ենք սիրել մեր եղբայրներին,
Որոնք սիրում են Քրիստոսին եւ բարեգործում են մեզ:
Ոչ միայն չենք սիրում մեր մերձաւորին մեր անձի նման,
Հին պատուիրանի համաձայն¹,
Այլ եւ ոչ իսկ մեր աւելորդ ունեցուածքների չափով:
Մտահոգուում ենք, յիրաւի, հոգատարութեան ապացոյցներ տալու
Մեր ունեցուածքների նկատմամբ,
Աւելի՛ քան մեր եղբայրների:

40. Առաւել մեծ հոգատարութեան ապացոյցներ ենք տալիս
Մտահոգուելով խոտի համար, որ փտում է
եւ հագուստների, որ մաշուում են,
Քան թէ մարդկանց հոգիների ու մարմինների համար,
Որոնք կաղապարուած են Աստուծոյ պատկերով, ինչպէս մենք:
Եւ նախընտրում ենք անգործութեան մէջ թողնելով կորցնել մեր բարիքները,
Քան թէ սիրալիր կերպով նուիրել
Մեր (հոգեւոր) շահի եւ նրանց փրկութեան համար:
Եթէ մեր բանջարեղէնները փտում են եւ մեր հագուստները՝ մաշուում,
Տխրում ենք:
Բայց չքաւորութեան մէջ մեռնող
Մեր նմանների հոգու եւ մարմնի մասին
Չենք մտահոգուում տալու մեր աւելորդ ունեցածը,
Այդպիսով փրկելով նրանց կեանքը:
Ասում ենք՝ թէ Քրիստոսի մտերիմներն ենք,
Եւ նրա աշակերտները, որ հետեւում են նրան.
Բայց մինչ նա սիրում է մարդկանց,
Մենք ատում ենք մարդկանց,
Դառնում ենք նրանց դահիճները²: ...

43. Տե՛ս սիրոյ նոր պատուիրանը³.
Ինչպիսի՞ն է նրա մեծութիւնը:
Մեզնից պահանջում է նմանուել Քրիստոսին:
Ինչպէս նա մեզ սիրեց մտերիմների նման
Եւ իր կեանքը զոհեց մեր համար⁴,
Մինչ մենք մեր մտածումներով իր թշնամիներն էինք⁵,
Մեր չար գործերի պատճառով⁶.
Նմանապէս մենք պարտաւոր ենք սիրել ուրիշներին,
Տալով մեր կեանքը, իւրաքանչիւրն իր ընկերոջ համար⁷:
Սրա համար է, իրօք, որ մենք համարուում ենք
Իր իրական մտերիմները,

¹ Հմմտ. Ղեւտ 19, 18

² Հմմտ. 1Թվհ 3, 15

³ Հմմտ. Թվհ 13, 34

⁴ Հմմտ. Եփս 5, 2

⁵ Հմմտ. Հռմ 5, 10

⁶ Հմմտ. Կող 1, 21

⁷ Հմմտ. 1Թվհ 3, 16

Եւ բոլորից ճանաչուամ ենք որպէս Իր աշակերտները,
Եթէ կատարուամ ենք այն ամէնը՝ որ պատուիրել է մեզ
Եւ միմեանց սիրուամ ենք, Իր պատուիրանի համաձայն.
«Դուք, – ասուամ է, – իմ մտերիմներն էք,
Եթէ կատարէք այն ամէնը՝ որ ես պատուիրեցի ձեզ»¹:
Նաեւ. «Ամէն ոք սրանից կ'իմանայ՝ թէ իմ աշակերտներն էք,
Եթէ սէր կ'ունենաք մէկը միւսի հանդէպ»²:
«Ով, հետեւաբար, ասուամ է. "Ես սիրուամ եմ Աստծուն",
Բայց չի սիրուամ իր եղբորը,
Ստախօս է եւ ճշմարտութիւնը նրանուամ չէ:
Եթէ, յիրաւի, չի սիրուամ իր եղբորը, որին տեսնուամ է,
Ինչպէ՞ս կարող է սիրել Աստծուն, որին չի տեսնուամ»³:

44. Սիրենք մեր եղբայրներին,
Որպէսզի մեր վրայ ծագի Աստծոյ կատարեալ սիրոյ լոյսը⁴:
Հեռացնենք մեզնից
Նախանձի եւ ատելութեան յամառ խաւարը,
Եւ բնակուենք
Ուրիշների հանդէպ սիրոյ եւ կարեկցանքի լոյսի մէջ:
Իսկապէս, նախանձն ու ատելութիւնը խաւար են,
Ինչպէս գրուած է.
«Ով ասուամ է՝ թէ լոյսի մէջ է,
Մինչ ատուամ է իր եղբորը,
Խաւարի մէջ է եւ խաւարի մէջ է ընթանուամ,
Եւ չգիտէ՝ թէ ուր է գնուամ,
Որովհետեւ խաւարը կուրացրել է նրա աչքերը»⁵:
Արտուամ բոյն դրած նախանձն ու ատելութիւնը,
Մութ մառախուղի նման պատուամ են նրան
Եւ կուրացնուամ են նրա հայեացքը:
Եւ ինչպէս խաւարի մէջ, խարխափուամ է
Իր չարութեան մէջ, առանց իմանալու՝
Թէ ինչ է ասուամ կամ անուամ:

45. «Իսկ նա, ով սիրուամ է իր եղբորը,
Բնակուամ է լոյսի մէջ
Եւ նրանուամ գայթակղութեան առիթ չկայ»⁶:
Լինելով, այսինքն, ճանաչողութեան լոյսի մէջ,
Երբեք չի ասուամ կամ անուամ մի բան՝
Որ գայթակղեցնուամ է իր եղբորը:
Սովորել է, յիրաւի, մեր Տիրոջից,
Թէ ինչպիսի դատապարտութիւն է ծանրանուամ նրա գլխին,
Ով գայթակղեցնուամ է իր եղբորը.

¹ Թվհ 15, 14

² Թվհ 13, 35

³ 1Թվհ 4, 20

⁴ Հմմտ. 1Թվհ 2, 10

⁵ 1Թվհ 2, 11

⁶ 1Թվհ 2, 10

«Նրա համար աւելի լաւ կը լինէր, – ասուած է, –
Եթէ վզից իշու երկանաքար կապէր
Եւ ծովի անդունդներն ի վար ընկղմուէր,
Քան գայթակղեցնէր այս փոքրիկներից մէկին,
Որ հաւատում են ինձ»¹:
Եւ այս վերջինների վերաբերեալ տալիս է այս խիստ ազդարարութիւնը.
«Զգուշացէք ինձ հաւատացող այս փոքրիկներից մէկին արհամարհելուց.
Նրանց հրեշտակներն, իրօք, շարունակ տեսնում են
Երեսն իմ Հօր, որ երկնքում է»²:

46. Հոգատար լինենք ուրիշների հանդէպ,
Մէկս միւսին մեծարենք, սիրոյ մէջ:
«Կարեկցող եղէք, – ասում է Պօղոսը, –
Ընտրութեան ձեր եղբայրների նկատմամբ
Եւ սիրեցէք միմեանց:
Փոխադարձ պատուի մէջ մրցակցեցէք»³:
Մեզնից պահանջուում է փոխադարձել մէկս միւսի հանդէպ տածած սէրը,
Որպէսզի գերառատութեամբ սաստկանայ ու աճի,
Սիրալիւր յարգանքի մէջ մրցակցութեան շնորհիւ:
Գիտակից է, յիրաւի,
Որ ուրիշների հանդէպ տածած մեր սէրը
Ձի կարող յարատեւ լինել եւ սաստկութեամբ աճել,
Եթէ սիրուած անձի սէրը չի փոխադարձում սիրողի սիրոյն:
Եթէ փոխադարձում չկայ, սիրողի սէրը սառում է,
Նոյնիսկ եթէ սկզբում անսահման էր իր սէրը,
Որովհետեւ սէրը չի հանդուրժում անտեսուած մնալ,
Մինչ սիրում է:

47. Հեռացնենք մեզնից, ուրեմն,
Եղբայրների նկատմամբ անհոգութիւնն ու արհամարհանքը.
Փոխադարձ մեծարանքի շնորհիւ
Բազմապատկենք մեր սէրը:
Յարգանքը մեծացնում է սէրը
Եւ նրան պարգեւում է մի հրավառ բոց,
Որը հրահրում եւ սաստկացնում է նրա կիրքը:
Անհոգութիւնն ու արհամարհանքը, մինչդեռ,
Հանգցնում են նրա բոցը,
Դարձնում են սէրը սառն ու անկայուն:
Իսկ վերջում, իշխել են տալիս նախանձին ու ատելութեանը.
Սիրոյ փոխարէն, ծնում են թշնամութիւն.
Այն աստիճան, որ այլեւս չի հանդուրժում եւ ոչ իսկ հպուել
Նրան՝ ում առաջ սիրում էր.
Եւ թերեւս պատրաստ է նաեւ սպանելու նրան,
Խանդի պատճառով:
Եթէ ոչ սրով եւ տեսանելիօրէն,
Առնուազն լեզուով, սրտի խորքում⁴: ...

¹ Մտթ 18, 6

² Մտթ 18, 10-11

³ Հռմ 12, 10

⁴ Հմմտ. Սղմ 64, 4

50. Հեռացնենք մեզնից, սիրելիներ,
Նախանձի փտութիւնը եւ զայրոյթի չարիքը,
Որոնք շարունակական տուայտանքների են ենթարկում
Հոգին ու մարմինը:
Բոլորի հանդէպ սնենք իրական սէր,
Ունենանք գեղեցիկ ու բարի սիրտ,
Որպէսզի մեր մարմինը դառնայ գեղեցիկ ու ժպտուն,
Իսկ մեր հոգին՝ պայծառ ու խնդուն:
Իսկապէս, բարի սիրտը գեղեցկացնում է մարմինը¹,
Մինչ կարծր սրտի պատճառով
Բազմապատկւում են վշտերը²:

51. Առատացնենք մեր սէրը բոլորի հանդէպ.
Բարիների ու չարերի,
Արդարների ու անարդարների.
Այսպէս վարուելով՝ կը նմանուենք Աստծուն.
Նրան՝ որ իր բարեացակամութեան արեւը ծագեցնում է
Բարիների ու չարերի վրայ,
Եւ իր շնորհի անձրեւը տեղացնում է
Արդարների ու անարդարների վրայ³:
Զսիրենք մեր մերձաւորին, ատելով թշնամիներին,
Ինչպէս հրամայում է հին պատուիրանը:
Եւ չսիրենք միայն նրանց՝ ովքեր սիրում են մեզ,
Մոռանալով միւսներին՝ որոնք մեզ արհամարհում են,
Վախենալով հատուցում չստանալ նրանցից,
Կարծես թէ մաքսաւորներ ու պոռնիկներ լինէինք⁴,
Քրիստոսի խօսքի համաձայն⁵:
Այլ բոլորի նկատմամբ, գերառատութեամբ,
Ցոյց տանք մեր սէրը.
Նրանց նկատմամբ՝ ովքեր մեզ սիրում են,
Եւ նրանց՝ ովքեր մեզ արհամարում են,
Այնպէս՝ որ պատիւ մատուցենք Աստծոյ պատկերին:
Սիրենք արդարներին ու մեղաւորներին,
Որովհետեւ բոլորն էլ ստեղծուած են ըստ Աստծոյ պատկերի:
Ուրախանանք արդարների հետ
Եւ հետեւենք նրանց գեղեցիկ գործերին:
Տրտմենք մեղաւորների համար
Եւ աղաչենք Աստծուն նրանց համար:
Եւ օգտակար խօսքերով ուղղենք նրանց,
Եթէ համաձայնում են:

¹ Հմմտ. Առկ 15, 13

² Հմմտ. Միր 3, 25

³ Հմմտ. Մտթ 5, 43

⁴ Հարկահաւաքներն ու պոռնիկները այստեղ նկատուած են որպէս անձնաւորութիւններ, որ ծառայութիւններ են մատուցում միմիայն վարձատրուելու նպատակով: Հեղինակի համար, այսպիսին է նաեւ նա՝ ով սիրում է միմիայն նրանց, որոնցից փոխադարձաբար բարեացակամութիւն է ստանում:

⁵ Հմմտ. Մտթ 5, 46-47

52. Ոչ ոք թող չարութեամբ չատի մեղաւորներին,
 Այսպիսով նմանուելով սատանաներին,
 Որոնք ատում են Աստծոյ պատկերը:
 Ով ատում է մեղաւոր մարդուն,
 Ձի տրտմում նրա համար եւ չի աղաչում Աստծուն,
 Այլ բարկութեամբ է լցւում նրա դէմ:
 Ատիր, ուրեմն, մեղաւոր մարդու գործերը,
 Բայց ո՛չ իրեն.
 Նրա համար տրտմիր եւ արտասուիր:
 Սա՛ է կամքը Քրիստոսի,
 Որն արտասուում էր Երուսաղէմի վրայ,
 Որը քիչ օրեր անց խաչելու էր Իրեն.
 Եւ ողորմութիւն էր խնդրում
 Նրանց համար, ովքեր խաչում էին Իրեն:
 Նմանուենք Նրան, ինչպէս նաեւ Առաքեալները Նրան նմանուեցին.
 Սիրենք բոլոր մարդկանց,
 Որովհետեւ Աստուած կամենում է՝ որ բոլորն էլ փրկուեն¹:
 Միայն սատանային ատենք, նրան՝ որ ատում է Աստծուն:
 Ինչ վերաբերւում է մարդկանց, մինչդեռ,
 Նոյնիսկ եթէ Աստծոյ եւ մեր թշնամիներն են,
 Մեծ սիրով աղօթենք նրանց համար,
 Քրիստոսի պատուիրանի համաձայն.
 «Սիրեցէք ձեր թշնամիներին
 Եւ օրհնեցէք ձեզ հալածողներին
 Եւ աղօթեցէք նրանց համար, ովքեր բռնութիւն են գործադրում ձեր դէմ
 Եւ հալածում են ձեզ»²:

53. Անկասկածելի է՝ որ մեր թշնամիներն ու հալածիչները
 Քրիստոսի թշնամիներն են եւ Նրա ճշմարտութեան հալածիչները:
 Բայց թէեւ այդպիսիք են, ասում է.
 «Սիրեցէք նրանց եւ աղօթեցէք նրանց համար,
 Որովհետեւ այսպէս վարուելով՝ որդիները կը լինէք ձեր երկնաւոր Հօր,
 Որը բարեացակամ է արդարների ու անարդարների նկատմամբ»³:

54. Սիրենք, ուրեմն, մեր թշնամիներին,
 Որոնց շնորհիւ կարող ենք նմանուել
 Այն մեծ սիրոյն, որ Աստուած հեղում է մեր վրայ⁴:
 Յիրաւի, մինչ իր թշնամիներն էինք՝
 Աստուած հաշտուեց մեր հետ
 Իր Որդու մահուան միջոցով⁵:

¹ Հմմտ. 1Տմ 2, 4

² Մտթ 5, 44

³ Մտթ 5, 44-45

⁴ Հարկաւոր է սակայն ընդգծել - քանի որ քրիստոնէական այս կատարեալ սկզբունքը յաճախ սխալ է հասկացւում եւ գայթակղութիւնների ու մինչեւ իսկ ճշմարտութիւնից շեղուելու առիթ է հանդիսանում որոշ պարզամիտների համար - որ խօսքը միշտ վերաբերւում է միմիայն մեր անձնական թշնամիներին: Այս սկզբունքը վաւերական է հաւաքական թշնամիների պարագային, ինչպիսին է, օրինակ, հայրենիքի պաշտպանութեան պարտականութիւնը:

⁵ Հմմտ. Հում 5, 10

Մենք նոյնպէս կարող ենք հանդարտեցնել նրանց թշնամութիւնը
Մեր գեղեցիկ գործերով.
Նրանց հանդէպ տածած մեր սիրով
Կարող ենք արմատախիլ անել նրանց ատելութիւնը.
Եւ մեր խոնարհ սիրով եւ մեր հեզութեամբ
Կարող ենք փափկեցնել նրանց կարծրութիւնը:
Եւ դեռ. խաղաղութեամբ ապրենք բոլոր մարդկանց հետ,
Այնքանով՝ որքանով կախում ունի մեզնից¹,
Եւ սիրով աղօթենք,
Հետեւելով նրա խորհրդին, ով Աստուծոց ստացել է
Վստահելի լինելու արժանիքը².
«Աղօթեցէք բոլոր մարդկանց,
Թագաւորների ու իշխանների համար,
Որպէսզի բնակուենք խաղաղութեամբ ու հանդարտութեամբ,
Աստուծոյ երկիւղով ու մաքրութեամբ:
Սա, յիշուի, գեղեցիկ է ու ընդունելի
Աստուծոյ առջեւ, մեր Փրկչի.
Նա կամենում է՝ որ բոլոր մարդիկ փրկուեն
Եւ հասնեն ճշմարտութեան ճանաչողութեանը»³:

55. Փառքը Նրան,
Եւ թող թագաւորի մեզնում իր սէրը յաւիտեան:
Ամէն:



¹ Հմմտ. Հռմ 12, 18

² Հմմտ. 1Կր 7, 25

³ 1Տմ 2, 1-4